ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-300-30.09.2019-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1478 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-300-30.09.2019-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի վերաբերյալ հարկ է նշել, որ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է, իսկ պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասում 2015 թվականին կատարված և 2017 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությամբ պարտադիր է ճանաչվել տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական, կամ միջին մասնագիտական կրթությունը: Նման մոտեցման համար հիմք է ծառայել այն իրողությունը, որ աշակերտը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքի ուժով երաշխավորված անվճար պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթությունն ամբողջությամբ կարող է ստանալ պետական հանրակրթական հաստատությունում, իսկ հիմնական կրթության հիմքով ուսումը նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով պետական ուսումնական հաստատություններում շարունակելու պարագայում՝ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունում: Հարկ է նշել նաև, որ, առաջնորդվելով նշված սահմանադրական նորմի և օրենքի տրամաբանությամբ,

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույն՝ 2017 թվականին համապատասխան փոփոխություն է կատարել իր 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշմամբ հաստատված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգում՝ դրա 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանելով, որ պետությունն ուսանողական նպաստի ձևով, մրցութային հիմունքով՝ ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար հատկացված անվճար ուսուցման տեղում մինչև 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին՝ մինչև ուսումնառության ավարտը:

Ելնելով շարադրվածից՝ գտնում ենք, որ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում հիմնական կրթությամբ 19 տարեկանը չլրացած սովորողների համար չի կարող սահմանվել վճարովի կրթության հնարավորություն:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին հնարավորություն է ընձեռվելու ուսումը շարունակելու բուհերի առկա ուսուցման 2-րդ կուրսում, եթե տվյալ մասնագիտության համար հեռակա ուսուցման ձև նախատեսված չէ:

Նախագծի ընդունման դեպքում անհավասարություն կառաջանա միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների միջև, քանի որ նրանց միայն մի մասը կկարողանա կրթությունը բուհերում շարունակել առկա ուսուցմամբ՝ այն պարագայում, երբ նրանց գերակշիռ մասն ուսումը պետք է շարունակի հեռակա ուսուցմամբ: Անհավասար պայմաններ կստեղծվեն նաև ավագ դպրոցում կամ միջնակարգ կրթության 3-րդ աստիճանում սովորողների համար, քանի որ վերջիններս չունեն նման հնարավորություն և բուհ են ընդունվում ընդհանուր հիմունքներով՝ այն պարագայում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի համաձայն միջնակարգ կրթության 3-րդ աստիճանը (10-12-րդ դասարաններ) և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիրն ունեն նույն՝ 4-րդ մակարդակը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ առաջարկում ենք օրենքների նախագծերի փաթեթով քննարկվող հոդվածները թողնել անփոփոխ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ խնդրո առարկա կարգավորումները կարող են ամրագրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման հավելվածում իրականացվող համապատասխան փոփոխություններով, որի նպատակահարմարությունը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ և համակողմանի ուսումնասիրություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

15 հոկտեմբերի 2019 թվականի N 1478- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-300-30.09.2019-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-300-30.09.2019-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, իսկ հիմնական կրթության հիմքով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնառելու դեպքում՝ անվճար կրթությունը կազմակերպվում է մրցութային հիմունքներով:»:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը «հեռակա ուսուցմամբ:» բառերից հետո լրացնել «Բարձրագույն կրթության այն մասնագիտությունները, որոնց համար սույն օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված չէ հեռակա ուսուցման կրթության ձևը, միջին մասնագիտական կրթության շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ առկա ուսուցմամբ:» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 01-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-300[1]-30.09.2019-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-164-Ն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական կրթության հաստատություններում ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով՝ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար և վճարովի տեղերի, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային հիմունքներով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 01-ից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Առկա իրավիճակն ու կարգավորման անհրաժեշտությունը

1) Սահմանադրական բարեփոխումների համատեքստում պետությունն ամրագրել է միջնակարգ կրթությունն անվճար կազմակերպելու պարտավորությունը և միաժամանակ, օրենքի ուժով բարձրացնելով պարտադիր կրթության աստիճանը (9-ամյա հիմնական կրթությունից՝ 12-ամյա միջնակարգ կրթության)՝ պետությունը երաշխիքներ է ստեղծել երեխաներին կրթության մեջ ընդգրկելու միջոցով զարգացող, գործող ու սոցիալական խնդիրներն ինքնուրույն հաղթահարող երիտասարդություն ձևավորելու համար:

Միանշանակ, ընդունելով և քննարկումից դուրս համարելով որդեգրված քաղաքականությունը, հարկ է անդրադառնալ նշված դրույթների կիրառման և մեկնաբանման հարցի վերանայմանը, քանի որ առաջնորդվելով սահմանադրական մեկ դրույթով՝ խախտվում է մյուսը:

Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 38-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:»:

Այս հիմքով, 2015 թվականին «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն և 2017 թվականի հունիսի 01-ից ուժի մեջ է մտել «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի նոր խմբագրությունը (ՀՕ-20-Ն, ընդունված 2015 թվականի ապրիլի 22-ին), համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: (...)»:

Վերոնշյալից հետևում է, որ 12-ամյա միջնակարգ կրթությունն ամրագրվել է որպես պարտադիր և անվճար կրթություն, որը կարող է կազմակերպվել հանրակրթական ուսումնական հաստատությունում՝ միջնակարգ կրթության 3-րդ աստիճանի ծրագրով կամ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթության հիմքի վրա համապատասխան մասնագիտական կրթական ծրագրի շրջանակում:

Հիմք ընդունելով օրենքի պահանջը՝ 2017-2018 ուսումնական տարվանից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում հիմնական կրթության հիմքով ընդունելությունը կատարվում է բացառապես անվճար ուսուցման համակարգում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տարեկան հատկացված տեղերին համապատասխան՝ մրցութային կարգով:

Մինչ այդ մասնագիտական ուսումնական հաստատությունները հնարավորություն են ունեցել համապատասխան լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում՝ ընդունելություն կատարել անվճար և վճարովի համակարգերում:

Ապահովելով Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասը, չի պահպանվում նույն հոդվածի 2-րդ մասը՝ այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունքի մասով: Նշված ձևակերպումն ամրագրում է մրցութային հիմունքներով անվճար մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը, ոչ թե բարցարձակ պայմանը:

Նույնականացնելով միջնակարգ կրթության պահանջը՝ մրցութային հիմունքներով մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության հետ, կանգնում ենք հակասության փաստի առաջ: Նույն տրամաբանությամբ, մասնավոր և պետության մասնակցությամբ դպրոցներն իրենց ծառայությունները կարող են կազմակերել վճարովի հիմունքներով, սակայն դրանից չի հետևում սահմանադրական նորմի խախտում, քանի որ դեպքերի ու պայմանների առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

Սակայն, ըստ էության, ընդունելությունը սահմանափակված է՝ պետական միջոցների սղության ու սահմանափակ տեղերի պատճառով:

2) Կրթության շարունակականության և հաջորդականության սկզբունքից ելնելով՝ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում սահմանված է՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ»: Նշված դրույթով նախատեսված սահմանափակ մոտեցումը պայմանավորված է այն քաղաքականությամբ, որ միջին օղակի սպասարկման մասնագետները հակված լինեն դեպի աշխատաշուկա մուտքի, սակայն կրթության շարունակության և հաջորդականության տեսանկյունից՝ ընձեռվի հնարավորություն ավելի բարձր աստիճանում կրթությունը շարունակելու համար:

2. Խնդիրները և կարգավորման նպատակը

1) ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի երկու մասերի համադրումը քննարկման և կարգավորման հարց չէր դառնա, եթե երկրի պետական բյուջեի միջոցներով հնարավոր լիներ ուսումնական հաստատություններին պատվիրակել ու աշխատաշուկա ուղղորդել ավելի մեծ թվով արհեստագործական ու միջին օղակի մասնագետների, որոնք կազմում են իրական աշխատաշուկայի 60-70%-ը:

Ստացվում է՝ հարցի կարգավորումը դառնում է հրատապ՝ պետական միջոցների սղության ու սահմանափակ տեղերի պատճառով: Քանի որ.

- մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետ՝ ՄԿՈ) ուսումնական հաստատություններն ունենալով ավելի մեծ թվով ուսանողների սպասարկելու ունակություն,

- աշխատաշուկան՝ արհեստագործական և սպասարկման ոլորտի մասնագետների մեծ պահանջարկ,

- դիմորդները՝ մեծ հետաքրքրվածություն ՄԿՈՒ կրթության, մասնագիտությունների և զբաղմունքների նկատմամբ, ինչին հաջողվել է հասնել ԵՄ-Հայաստան տեխնիկական աջակցության և համագործակցության ծրագրերի շրջանակում շուրջ 10 տարի տևած բարեփոխումների արդյունքում,

- ծնողների պատրաստակամություն՝ իրենց երեխայի կրթության, մասնագիտական նախընտրությունների և աշխատաշուկա արագ մուտք գործելու դիմաց վճարելու և վերջապես՝

- Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում ընդունելությունն ու կրթության վճարովի և անվճար համակարգերում կազմակերպելու իրավունքը՝ բոլոր շահառուները սահմանափակված են՝ սահմանադրական նորմի իմպերատիվ մեկնաբանության պատճառով: Արդյունքում՝

- 2017 թվականից աստիճանաբար նվազում է վճարովի համակարգում սովորողների թիվը, իսկ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հատկացվող պետական բյուջեի ֆինանսավորման ծավալների կրճատման պատճառով էականորեն նվազել են անվճար ուսուցման տեղերի թիվը, որի հետևանքով անվճար ուսուցման տեղերը չեն բավարարում՝ ըստ մասնագիտությունների, խմբերի միջին կոմպլեկտավորումն ապահովելու և կրթական նվազագույն ծախսերը հոգալու համար,

- ՄԿՈՒ մասնագիտությունների գծով դիմորդների ընդունելության մրցույթը հասել է միջին հաշվով 1:3-ի, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 1:8-ը հարաբերակցության և տեղ տվել դիմորդների ու նրանց ծնողների բուռն դժգոհությանը,

- ուսումնական հաստատություններն ունեն կրթություն և գործնական ուսուցում կազմակերպելու դժվարություններ, հատկապես որովհետև ՄԿՈՒ մասնագիտությունները պահանջում են մեծ նյութատարություն և աշխատատարություն:

2) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում լրացում կատարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ արվեստի, առողջապահության, սպորտի և մի շարք ոլորտների մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման ձևը նախատեսված չէ, հետևաբար՝ ոլորտային մասնագիտություններով ՄԿՈՒ շրջանավարտները չեն կարող օգտվել կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությամբ շարունակելու հնարավորությունից: Դրա արդյունքում՝ բարձր առաջադիմությամբ և արդեն մասնագիտական որակավորում ունեցող դիմորդի համար տեղի է ունենում մասնագիտական ծրագրի կրկնություն:

Սույն նախագծի ընդունումը հավասար պայմաններ կստեղծի արվեստի, առողջապահության, սպորտի և հեռակա ուսուցում չունեցող այլ մասնագիտությամբ շրջանավարտներին՝ կրթությունը շարունակելու տվյալ մասնագիտության 2-րդ կուրսում՝ առկա ուսուցմամբ:

3. Ակնկալվող արդյունքը

1) Նախագծերի փաթեթի ընդունումը հնարավորություն կտա առավել նպատակաուղղված և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան անվճար ուսուցմամբ տեղեր հատկացնել, իսկ վճարովի ուսուցմամբ մատուցվող ծառայությունները հնարավորություն կտան ուսումնական հաստատություններին ձևավորել որոշակի բյուջե՝ այն կանոնադրական նպատակներով օգտագործելու համար:

2) Փաթեթը նաև հնարավորություն կընձեռի միջին մասնագիտական կրթության արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի մասնագիտությունների գծով բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին կրթությունը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ 2-րդ կուրսում՝ առկա ուսուցմամբ: